ՆՇԱՆԱՎՈՐ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԱՑԱՆՔԸ

ՊԵՏՀՐԱՏ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ XX ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

Կրտսեր տարիքի համար

ՆՇԱՆԱՎՈՐ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՅԱՆՔԸ

ԱՆՆԱ ԳՐԻՆԲԵՐԳ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 թ.

3К26(003)
Գ-91

ԼԵՆԻՆ

Թարգմ. Մ. ԴՈՒՐԳԱՐՅԱՆ

1386

ՊԵՏ ՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿԿԻՑ ՄԱՆԿԱՎԱՐԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

A II/6636

ՄԻԽԵԼՍՈՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Քաղաքացիական պատերազմ էր։

Խորհրդային յերկիրը յետ էր մղում սպիտակ-ների հարձակումները։

Մոսկվայում, ուրբաթ որերը միտինգներ եյին գումարվում գործարաններում, թատրոններում, ակումբներում։

Մեկ անգամ միտինգ էր նշանակված Զամոսկ-վորեչիայում, Միխելսոնի մետաղագործարանում։

Բանվորներն յեկան Սիմոնովսկի և Դանիլովսկի արվարձաններից։ Շատ ժողովուրդ էր հավաքվել։

Խոսում եյին սովի և ապրուստի դժվարու-թյունների մասին։

Հանկարծ բոլորը միասին կանչեցին.

— Յեկա՛վ.

Ներս մտավ Լենինը և սկսեց խոսել։ Լռություն էր։

Լենինն ասում էր. սպիտակ չեխո-սլովակները կռիվ են գալիս մեզ վրա և պետք է կռվել։ Լենինն ասում էր. դժվար է կյանքը, սով է, սակայն յեթե աշխատենք, կհաղթահարենք։

Յերբ նա վերջացրեց, բանվորները ձայն տվին.

— Մենք բոլորս մեկ մարդու պես, սպիտակնե-րի դեմ դուրս կգանք։— Յեվ յերգեցին։

Լենինը խոսում էր և չգիտեր, վոր նրան հե-

տևում են ամբոխի միջից։ Նրան հետևում էր մի անծանոթ կին։ Նա հագել էր կեղտոտ կոշիկներ և սև շրջազգեստ։ Նա ծխում էր։ Խորհրդային իշխանության թշնամիներն այդ կնոջն ուղարկել էին միտինգ՝ Լենինին սպանելու։

Լենինը վերջացրեց և գնաց դեպի իր մեքենան։ Բոլորը գնում էին նրա հետ ու յերգում էին։

Հենց քայլելիս էլ նա հաղնում էր վերարկուն։

Բակում նրան յերկու բանվորուհի կանգնեցրին։ Բանվորուհիներից մեկը հարցնում էր հացի և կտորեղենի մասին։ Նա սկսեց բացատրել և վոտքը դրեց ավտոյի աստիճանին։

Այդ ժամանակ սև շրջազգեստով կինը նշան բռնեց և յերեք անգամ կրակեց։

Լենինն ընկավ, իսկ մարդասպանը վազեց։

Բայց բակի յերեխաները նրան տեսան ու գոռացին.

— Իվանով, նա վազեց դեպի տրամվայը։

Բանվորները հասան և բռնեցին նրան։ Նա — սպիտակ գվարդիական Կապլանն էր։

ՎԻՐԱՎՈՐ ԼԵՆԻՆԸ

Լենինին բարձրացրին և ավտո նստեցրին։ Նա ծանր էր շնչում։ Շոֆերի կողքին նստեց բանվորը։

Մեքենան սուրաց դեպի Կրեմլ։ Մեծ դարպասի առաջ պահակներ էին կանգնած։ Շոֆերը ձայն տվեց. «Լենին» և անցավ առանց կանգ առնելու։

Մոտեցան բնակարանին։ Լենինը դժվարությամբ դուրս յեկավ։

Շոֆերն ու ընկերները խնդրեցին.

— Մենք ձեզ ներս կտանենք։

Բայց նա թույլ չտվեց. ասաց,

—Յեռ ինքս կգնամ։ Հանեցեք պիջակս, ավելի հեշտ։ կլինի գնալը։



Վ. Ի. Լենինը 1921 թ.

Նա դժվարությամբ բարձրացավ յերրորդ հարկը։ Շոֆերը նրան պառկեցրեց մահճակալի վրա։ Մարդ ուղարկեցին Կրեմլի դեղատուն։ Կանչեցին բժիշկներին։

ԼԵՆԻՆԸ ԱՌՈՂՋԱՑԱՎ

Գնդակները ծակել եյին Լենինի թևը, անցել ձախ ուսի միջով, վիրավորել եյին թոքը։ Վերքերը ծանր եյին։ Դժվար եր առողջանալը։

Բայց Լենինն առողջացավ։

Վերքերը կապելիս նա կատակում եր։

Յերբ սկսեց ման գալ, ձախ ձեռքում պահում եր 2 կիլոգրամ ծանրությամբ մի պարկ՝ կոտորակով լիքը, վորպեսզի կոտրված թևի վոսկորները չկարճանան։

Ձեռքն առողջացավ յերկու ամսում։

Լրագրերում առավոտ-յերեկո բյուլետեններ եյին տպում Լենինի առողջության մասին։

Վերջապես վողջ յերկիրը կարդաց.

«Ընկեր Լենինը կազդուրվում է»։

Ամեն որ լրագրերը հաղորդում եյին. այս ինչ գործարանում, ի պատասխան մահափորձի, բանվորները կամավոր են գրվում ռազմաճակատ գնալու։

* * *

Չորս տարի անցավ։

Քաղաքացիական պատերազմը վերջացավ։ Սպիտակ գվարդիականներն ստիպված եյին փախչել Խորհրդային Ռուսաստանից։ Ոտարերկրյա կապիտալիստները բանվորների և Կարմիր բանակի ուժեղ հարվածների տակ հարկադրված եյին հեռացնել իրենց զորքերը։

Խորհրդային յերկիրն սկսվեց կառուցվել։

ԱՅՑԵԼՈՒՆԵՐԸ ԼԵՆԻՆԻ ՄՈՏ

Լենինն ու նրա բոլշևիկ—ընկերներն սկսեցին աշխատել գիշեր ու ցերեկ։ Վաղ առավոտյան Լենինը գալիս եր Կրեմլ իր աշխատանքի առանձնասենյակը։ Նրա սեղանին դարսած եյին գրքեր, թղթեր, լրագրեր, հեռագրեր, նամակներ։

Լենինը թափթփածություն չեր սիրում, ամեն ինչ իր տեղում եր լինում դրված։

Նրան ընդունելության եյին ներկայանում այցելուներ զանազան քաղաքներից ու գյուղերից։ Մի անգամ հեռու գյուղից գյուղացիներ յեկան։ Նրանց գյուղի մոտ ճակնդեղի-շաքարի գործարան կար։ Գյուղացիները վորոշել եյին գործարանից վերցնել ճակնդեղի դաշտերը։

Նրանք ասում եյին.

—Ճակնդեղի հողը շատ լավն է։ Առանց այդ հողի մենք յոլա չենք գնա։ Այդ հողում ցորեն կցանենք։

Ու մարդ ուղարկեցին Մոսկվա, Լենինի մոտ։

Իսկ Լենինը հարցրեց միայն.—«Բա ինչպես կմնանք առանց շաքարի գործարանների»։ Յեվ բացատրեց, թե ինչու չի կարելի ավերել ճակնդեղի դաշտերը։ Գյուղացիները նստել եյին Լենինի կողքին և յերկար ժամանակ լսում եյին։ Յերբ վոր դուրս յեկան, ասացին.

—Գյուղ կգնանք, կպատմենք։ Ամեն ինչ բացատրեց նա, ինչ վոր իսկությունն է։

Իսկ նրանցից մեկն ասաց.

—Գյուղացիության գործը լավ է հասկանում։

ԿՐԵՄԼՈՒՄ

Ժողկոմխորհի նիստերին Լենինը լսում էր ժողովրդական կոմիսարների զեկուցումները։ Հետո ասում էր նա.

—Գյուղից հաց չի գալիս։ Գյուղի համար կը-տորեղեն ունե՞նք։ Մեխ ունե՞նք։ Գործարաններում գյուղացիների համար խոփեր շինո՞ւմ են։ Գործարաններում բավականանո՞ւմ է վառելիքը։ Այսոր քանի՞ վագոն ածուխ է յեկել գործարանների համար։

Նրան պատասխանում էին.

—Այսոր այսքան վագոն ածուխ է ստացվել։

Լենինը պատասխանում էր։

—Քիչ է։ Պետք է ավելի լավ կազմակերպել։ Յեթե քաղաքում կտորեղեն ու մեխ լինի գյուղացիների համար, գյուղացիները հաց կբերեն քաղաք։

Լենինը աշխատում էր մինչև ուշ գիշեր։

Մի կարմիր-բանակային գիշերը հերթապահում էր Կրեմլում։ Հերթապահությունից հետո նա պատմում էր.

—Յես տեսա, ինչպես Վլադիմիր Իլյիչը դուրս յեկավ իր առանձնասենյակից։ Նա հոգնածությունից որորվում էր, նրա դեմքը մթագնել էր հոգսերից։

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆԸ

Ընկերներն սկսեցին նկատել, որ Լենինը հոգնել է։

Նա յերբեք չէր դանդաղում։ Մեկ-մեկ բռնում է գլուխը, շփում է քունքերն ու ելի շարունակում աշխատել։

Ընկերները համոզեցին, որ հանգստանա։



Վ. Ի. Լենինը յեվ Ի. Վ. Ստալինը Գորկիայում 1922 թ.

Բայց հանգստի ընթացքում նա մտահոգված եր գործերով։ Մեկ տոմսակ եր ուղարկում, մեկ նամակ կամ հարցումներ եր անում։

Նա ամուր եր, պնդակազմ։ Բայց հանկարծ ծանր հիվանդացավ։

ՎԵՐՋԻՆ ԽՈՍՔԸ

Մոսկվայում մեծ համագումար կար։ Այլ յերկրներից բանվորներ ու գյուղացիներ եյին յեկել։

Լենինն իրեն բավական լավ եր զգում։ Նա համագումար յեկավ։

Բայց դժվար եր մնալ։ Հազիվ եր վոտքի վրա կանգնում։ Բայց և այնպես ուզեց իր խոսքն ասել ոտարերկրյա ընկերներին։ Նա գերմաներեն եր խոսում Նրանց հետ.

—Ձեզ մոտ բանվորա-գյուղացիական իշխանություն հաստատեցեք։ Պատրաստվեցեք։ Ուժ հավաքեցեք։ Մենք ձեզ կոժանդակենք։

Նույն շաբաթվա ընթացքում նա գնաց նաև Մոսկվայի խորհուրդը։ Սա վերջին անգամն եր։ Նա այլևս չկարողացավ վոչ աշխատել, վոչ գրել։

Նրան Գորկա տարան, Մոսկվայից յերեսուն կիլոմետր հեռավորության վրա։

ԳՈՐԿԱՅՈՒՄ

Նա յերբեք ժամանակ չեր ունենում յերկար հանգստանալու։ Իսկ այժմ ստիպված եր ամբողջ որերով հանգստանալ, անտառ գնալ զբոսանքի, դիտել՝ ինչպես են խաղում շան ձագերը։

Նրա մոտ գալիս եր Ստալինը։ Գալիս եյին հին բոլշևիկ-ընկերները։

Նա դժվարանում եր ման գալ։ Նրան պարտեզում ման եյին ածում հյուսված բազկաթոռում,

անիվների վրա։

Հին բանվորներից մեկն ասում եր ընկերներին.

— Մենք ամբողջ ճանապարհը հարթել ենք, որպեսզի նրա համար հանգիստ լինի զբոսանքը։ Միայն թե լավնար իլյիչը։

Նա ուզում եր առողջանալ։ Վոչ վոք այնպես չը-գիտեր, ինչպես ինքը, թե դեռ ևս ինչքան չկատարված գործեր են մնում։

6 ԺԱՄ 50 ՐՈՊԵ

Բայց նա մեռավ։

Իրիկունը, Գորկայում, ձմեռը, ուժեղ սառնամանիքներին, նա մեռավ։ Հունվարի 21-ն եր։ Ժամը 6-ից անց եր 50 րոպե։

Դուռը բաց եր դեպի դուրս, ցուրտը։ Նա պառկած եր սեղանին կարմիր դագաղում։ Նրա հագին կանաչ բաճկոն կար։

Դագաղը դուրս հանեցին։ Ձյունի փեսրիկներն ընկան նրա դեմքին։

Դագաղը ծածկեցին ապակյա ծածկոցով։ Ընկերները տարան այն՝ ձեռքերի վրա։ Մինչև կայարան յոթ կիլոմետր եր։ Առջևից գնում եր մի գյուղացի յեղնու թարմ ճյուղերով լի սահնակով և ձյունոտ ճանապարհի վրա սփռում եր յեղնու կանաչ վոստերը։

Շուրջը բլուրների վրա կանգնել եյին գյուղացիներ, կանայք ու յերեխաներ, դիտում եյին ձյունածածկ կարմիր դագաղը — ճանապարհում եյին Լենինին։

Դագաղի վրա դրված եյին գյուղական հասարակ՝ սոճու ճյուղերից հյուսած պսակներ։

ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈՒՆԸ

Մոսկվայում հին բոլշևիկները Պավելեցկի կայարանից նրան ձեռքերի վրա տարան։

Դագաղի մոտով գնում էր Ստալինը։

Նրանք Լենինի դագաղը բերին Միությունների տունը և դրին Սյունադարդ դահլիճում։

Այս դահլիճում Լենինը ճառեր էր ասել ժողովներին և համագումարներին։

Դագաղը դրված էր բարձրության վրա։ Նա պատած էր կարմիր մահուդով։ Նրա մոտ դրված էին չորս արմավենի։ Պատերը ծածկված էին սև ու կարմիր դրոշակներով։ Դրոշակների վրա ասեղնագործած էին մանգաղներ, և մուրճեր, և աստղեր։ Շուրջը ծաղիկներ էին ու պսակներ։

Դագաղի մոտ պատվո պահակ էր կանգնած։ Յուրաքանչյուրը վերջին անգամ պահակ էր կանգնում Լենինի մոտ տաս րոպե։ Սգո յերաժշտությունը նվագում էր լուռ, և ցերեկը և գիշերը փողոցից գալիս էին հերթով բոլորը, վորպեսզի հրաժեշտ տան սիրելի առաջնորդին։

Խիստ սառնամանիք էր։ Վառվում էին խարույկները։ Դպրոցականներին առանց հերթի էին թողնում։

Զորս որ և չորս գիշեր գալիս էին դրսից ու անցնում Սյունադարդ դահլիճով։ Չէին խոսում։ Լուռ նվագում էր յերաժշտությունը։ Անցնում էին դագաղի մոտով։ Դագաղում պառկած էր Լենինը...

ԹԱՂՈՒՄԸ

Լենինին թաղեցին Կարմիր հրապարակում, Կրեմլի պատի տակ։

Դագաղը վերցրին և վերջին անգամ գլուխների

վրայով տարան դամբարանի մոտ։

Ժամը չորսն էր։ Վորոտացին թնդանոթները, շչացին գործարանային շչակները, սուլեցին շոգեքարշերի սուլիչները։

Գնացքները կանգ առան դաշտերի մեջում։ Վագոններում վեր կացան ուղևորները։ Քաղաքներում անցորդները կանգնեցին փողոցներում և վերցրին գլխարկները։ Հեռու յերկրներում Մոսկվայից ռադիոյով հնչեց թաղման յերաժշտությունը։

Ռաբերկրյա բանվորներն իրենց լեզվով ասացին միմյանց. «Մեռավ Լենինը»։

Մավզոլեյից վերջինը դուրս յեկան Լենինի ընկերները։ Պատվի առան պահակները։

Տներին, դրոշակների վրա, փողոցներում գրված էր.

ԼԵՆԻՆԸ ՄԵՌԱՎ, ԲԱՅՑ ՆՐԱ ԳՈՐԾՆ ԱՊՐՈՒՄ Է.

ՅԵՐԴՈՒՄ

Դեռ չեյին վերջացել հունվարյան սգո որերը, դեռ ևս փողոցներում կախված եյին դրոշակները, իսկ գործարաններում լենինյան կոչն էր տարվում։ Այդ կուսակցություն եյին մտնում հազարավոր բանվորներ։ Գալիս եյին Լենինի կուսակցության մեջ, Լենինի գործի համար, գալիս եյին սոցիալիզմ կառուցելու։

1924 թ. հունվարի 26-ն էր։ Մոսկվայում բացվեց Խորհուրդների Համամիութենական II համագումարը։

Համագումարի պատգամավորները հավաքվել եյին Մեծ թատրոնում։ Վառվում եյին բարձր ջահերը։ Շատ լուռ էր։ Այս—առաջին համագումարն էր առանց Լենինի։

Ամբիոն բարձրացավ Ստալինը։ Նա առաջացավ և համագումարի առջև լենինյան–բոլշևիկի յերդում տվեց։

Նա ասաց.

—Մեր կուսակցությունն ամուր և միասնական կլինի։

Խորհրդային իշխանությունը հաստատ ու հզոր կլինի։

Կամրանա բանվորների ու գյուղացիների կապը։

Կամրանա Խորհրդային Միության ժողովուրդների բարեկամությունը։

Կարմիր բանակը ամուր ու անհաղթ կլինի։

Նա ասաց.

—Յերդվում ենք քեզ, ընկեր Լենին, մենք պատվով կկատարենք քո պատգամները։

Տասներեք տարի առաջ Ստալինը Լենինի դագաղի առջև յերդվեց պատվով կատարել նրա պատգամները։

Յեվ կուսակցությունը մեծ Ստալինի ղեկավարությամբ կատարեց այդ յերդումը։



Գլխ. խմբ. ՄՈՎՍԻՍՅԱՆ
Տեխ. խմբ ԱՆ. ԳԱՍԳԱՐՅԱՆ
Ցրբագրիչ՝ Թ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ
Կոնտրոլ սրբագրիչ՝ Մ. ՄԱՐՏԻԿՅԱՆ

Գլավլիտի լիազոր՝ 4733 Հրատ. 4335
Պատվեր 1236 Տիրաժ 4000.
Թուղթ. 62×94 Տպագր. 1 մամ.
Մեկ մամուլ. 23000 նիշ. Հեղինակ. 1/2 մամ.
Հանձնված է արտադրության 9/IX—37
Ստորագրված է տպագրության 23/XI—37
Գինը 50 կ.

Երևան, Պետհրատի տպարան, Լենինի փող. № 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0021705

— 08 կտոր.
ՊՄԲԵ 58 Լ.
126
3К 2-
Գ-97
Ա 11/6636

АННА. ГРИНБЕРГ

ЛЕНИН

Гиз Арм. ССР. Ереван, 1938 г.

Пров.